ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Է Ն - Ա Ո Ւ Դ Ի Տ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA

" N – AUDIT "

LIMITED LIABILITY
COMPANY

375002, Երեւան, Թումանյան¬40/28

375002, Yerevan, st. Tumanyan-40/28

Հեռ. ☎(37410) 53-40-41, (37491) 40¬80¬41
e-mail: n-audit@web.am

Աուդիտորական ծառայությունների
իրականացման լիցենզիա
թիվ ԱԾ N 007, 06.06.2002թ.

07.11.2017թ.

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Լիզին» ԲԲԸ
բաժնետերերին

Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Մեր կողմից իրականացվել է «Լիզին» ԲԲԸ կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը: Ընդ որում, այդ հաշվետվությունները ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև 2016 թվականի համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը: Աուդիտի ենթարկված հաշվետվությունների կազմում ներառված են նաև ծանոթագրությունները, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ձեր ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և միջազգային ստանդարտների ուղեցույցներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի անհրաժեշտ վերահսկողության համակարգ սահմանելու համար, որը թույլ է տալիս ապահովել խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը: